պատահեցեալ զի անկեալ և մեռեալ, բարկացողն արիւն նորայ 'ի ընդիմակացէ մի՛ խնդրեսցի։

ԳԼՈՒԽ ՅԿԴ.

Ոչ ոք հայրապետ, նախարար, Եպիսկոպոս, տանուտէր, քահանայք, յիշխանք աշխարհի մի՛ հրամայեսցեն 'ի վերայ ո՛չ ումեք արտաքոյ աստիճանի իւրեանց, և կամ յաւելի քան զայն, որ տուաւ նոցա ըստ իւրաքանչիւր կարգի եթէ էկ-լեզիաստիկէ, և եթէ 'ի տանէն հայոց։

ԳԼՈՒԽ ՅԿԵ.

Հայրապետ, նախարար, Եպիսկոպոս, տանուտէր, քահանայք և ամենայն կարգի յիշխանք աշխարհի արտաքոյ աստիճանի իւրեանց իւրաքանչիւր անձամբ ըստ բնական և բանական բնութենէ իւրեանց ըստ կամաց և ըստ հաճոյից իւրաքանչիւրոյ շարժիլ գործել զամենայն աւուրս կենաց իւրեանց, թէպէտ բնական բնութիւն մարդոյ յորդորէ այլ պարտ է նոցայ ընդունելով յանձն առնուլ 'ի վերայ իւրեանց վարձս գործոց իւրաքանչիւր ձեռաց 'ի յօրինացն հայոց։

ԳԼՈՒԽ ՅԿԶ.

Ոչ ոք քահանայ ո՛չ դիցէ ձեռս իւր 'ի վերայ ո՛չ ոք երիտասարդի և կուսի, և առն և կնոջ Օրհնելոյ առ 'ի ամուսնութիւն եթէ չիցէ ծուխ